

ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐՏԱՅՈՒՆՆԵՐՆ ԹՐԲԱԼԵՋՈՒ ԵՐԳԵՐԸ

ՎԵՐՔԻՆԵ ՍՎԱԶԼՅԱՆ

Վերջին տարիներին ավելի է մեծացել հետաքրքրությունը հայ ժողովրդի համար ճակատագրական դարձած Մեծ եղեռնի իրադարձությունների նկատմամբ, քանի որ թուրքական պատմագրությունը հաճախ փորձում է աղավաղել պատմական ստույգ իրողությունները: Այդ իսկ առումով, պատմաճանաչողական կարևոր արժեք են ներկայացնում հիշյալ դեպքերի անմիջական տպավորության տակ հորինված ժողովրդական երգերը, որոնք ցարդ տարբեր պատճառներով գրեթե չեն գրավել և ուսումնասիրվել:

Արևմտահայ հայրենադարձ տարագիրներից մեր գրառած տարբեր հուշապատմաներում ի հայտ են եկել տխուր ու թախծոտ այս երգերը*, որոնք ժողովրդական պարզ ոճով վերարտադրում են զորահավաքի, տեղահանության, ջարդի ու կոտորածի դրվագներ: Նման երգերը հորինվել են հայերեն և մեծ մասամբ թուրքերեն, քանի որ մինչ այդ, արևմտահայ որոշ գավառներում և Անատոլիայի խորքերում, հայերենի հետ գործածվել է նաև թուրքերենը:

Այս երգերը բնորոշվում են մի շարք ինքնատիպ առանձնահատկություններով:

1. Հորինվելով հայ ժողովրդին վիճակված պատմական յուրահատուկ իրադարձությունների անմիջական տպավորությունների տակ՝ հագեցած են պատմականությամբ:

2. Նույնանման երգեր միաժամանակ հայտնաբերվել են դանդաղան տարբերակներով ու փոխակերպումներով, որը վկայում է այդ երգերի ժողովրդական բնույթի մասին:

3. Թեպետ հիշյալ երգերը հորինվել են թուրքերեն, բայց եռլայնացները տառագիր հայերեն (Մարիտմ Բաղդիշյան, Գարեգին Թուրուբեկյան, Գրիգոր Գյուլելյան, Սողոմոն Փաշայան, Սողոմոն Եթենեկյան, Կարապետ Թողլյան, Արշալույս Չրչյան, Գևորգ Հեքիմյան, Սաթենիկ Գույումջյան և ուրիշներ):

4. Երգերում հիշատակվում են. ա) հայաբնակ տեղավայրեր (Աղանա, Չանակալի), բ) հայկական անձնանուններ [Տղլիկ(յան) Սարգիս, Թափակ(յան) Միսակ], գ) հայերեն բառեր (մայրիկ, նշանած) և բառակապակցություններ (Եփրատ գետ, շուն Քեմալ փաշա):

Այս ամենը վկայում է, որ խնդրո առարկա երգերը հորինել են հայեր:

Անդրադառնալով պատմությանը, հարկ է հիշել, որ թուրք ասպատակիչները, հրով ու սրով նվաճելով Արևմտահայաստանը, հայերի նկատմամբ սկզբից ևեթ վարել են բարբարոսական քաղաքականություն: Սուլթան Համիդի իշխանության տապալումից հետո կառավարության գլուխն անցած երիտթուրքերը, դավանելով պանթուրքական ու պանիսլամական հետադեմ գաղափարախոսությունը, ձգտում էին ոչ միայն պահպանել Օսմանյան կայսրությունը, այլև բռնությամբ ոչնչացնել կամ ձուլել-թուրքացնել հայերին ու մյուս հպատակ ժողովուրդներին և ստեղծել համաթուրանական տերություն՝ Միջերկրա-կանից մինչև Արալյան ծով, որի մեջ պիտի մտնեին բոլոր մահմեդականները: Պատմաքաղաքական այդ պայմաններում է կազմակերպվել «Կիլիկիայի գիշերը» 1909 թ. Աղանայում, որը հայ ժողովրդի հիշողության մեջ մնացել է որպես «Ղրիմա Աղանա» («Ջարդված Աղանա»): Աղանայի դեպքերի անմիջա-

* Ժողովրդագիտական նյութերը մեջբերված են ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի կազմակերպած անհատական գիտարշավների ընթացքում մեր կատարած գրառումների անտիպ ժողովածուից:

ան տպավորության տակ է ստեղծվել արտահայտչական խորությամբ ու պատկերավորությամբ հագեցած այս երգը.

Հէ՛յ, շամլար, շամլար, ալ-աճըխ
շամլար,
Հէր գյունէշ վուրընջա՝ սակըղ
դամլար,
Օ՛ֆ, Ադանա ըրմաղը լէշ իլան
քանլար...
Իշդէ գյօրդիմ սիզէ, ղըյմա յօ-
ջուբլար,
Օ՛ֆ, օ՛ֆ, իշգէ գէլդիմ սանա,
ղըյմա Ադանա:

Հե՛յ, մայրիներ, մայրիներ, գույն-
գույն մայրիներ,
!Ամեն արև դիպչելիս՝ խեժը ծո-
րում է կաթ-կաթ,
Ավա՛ղ, Ադանայի գետում ար-
յուն ու դիակ...
Մորթված մանուկներ, ավա՛ղ,
ձեզ տեսա,
Ջարդված Ադանա, ավա՛ղ, քեզ
եկա:

Ըստ էության, սա Մեծ եղեռնի սկիզբն էր, երբ երիտթուրքերը տենդորեն նախապատրաստվում էին հիմնովին բնաջնջել հայ ժողովրդին՝ սպասելով հարմար առիթի: Այդ առիթը ստեղծվեց, երբ բռնկվեց առաջին համաշխարհա-
յին պատերազմը: Զավթողական, անարդարացի այդ պատերազմն իր արտա-
ցումն է գտել նաև ժողովրդական երգերի մեջ.

Փէնջէրէդէն յէլ գէլիօր,
Բակ դըշարը քի՛մ գէլիօր,
Դէստէ-դէստէ գյուլ գէլիօր,
Օլո՛ւ մ բանա զօր գէլիօր,
Թութուն ջիհան քան աղլիօր:

Պատուհանից հով է գալիս,
Տեսեք դրսից ո՛վ է գալիս,
Փունջ-փունջ վարդեր է գալիս,
Մահն ինձ դժվար է գալիս,
Ողջ աշխարհն արյուն է լալիս:

Դարնան զարթոնքի, փունջ-փունջ վարդերի գեղատեսիլ պատկերին կտրուկ հակադրված է մահվան սարսափը, որը, սակայն, սոսկ ներանձնական, ներագ-
գային տխրություն չէ, այլ՝ համընդհանուր-հասարակական բնույթի ողբեր-
գություն, քանի որ «Ողջ աշխարհն արյուն էր լալիս» համաշխարհային պա-
տերազմի այդ օրերին:

Թուրքիայում ապրող քրիստոնյա ազգերի, ինչպես և հայերի համար մե-
ծագույն շարիք էր դարձել զորահավաքը: 18—45 տարեկան տղամարդկանց զորահավաքի անվան տակ ներգրավվում էին աշխատանքային գումարտակ-
ների մեջ: Թուրքական բանակին բռնի զինվորագրված հայ երիտասարդը նա-
խազգում է, որ «Սրան մահվան ճամփա կասեն», իսկ «Հայերն այնտեղ շատ ու
շատ են...»:

Անա՛, օյանդըր բէնի գիդէլմ
թալիմէ,
Այնալը մարթինը ալալըմ էլիմէ,
Գէթմէյէ դօղրու վաթան յօլընա,
Բունա ծլու՛մ յօլու դէրլէր, ալլահ
սակլասըն,
էրմէնիլէր շօկ դըր դէրլէր, ալլահ
կուրթարսըն:

Մա՛յր, արթնացրու ինձ, գնամ
վարժանքի,
Ձեռքս վերցնեմ հայելիով մար-
տին,
Գնալու եմ ուղիղ ճամփով հայ-
րենի
Սրան մահվան ճամփա կասեն,
աստված պահպանի,
Հայերն այնտեղ շատ ու շատ են,
աստված թող փրկի:

Եթե այս երգի մեջ հայ զինվորը «վաթանը»՝ հայրենիքը, պաշտպանելու նպա-
տակով գնում է թշնամու դեմ կռվելու, ապա հետագայում նա արդեն գիտակ-
ցում է, որ զորահավաքի անվան տակ իրեն տեղահանել են հայրենի օջախից,
հեռացրել սիրելիներից.

Դուզլու օլուր Ստամբուլըն ֆըս-
տըղը,

Ադի է լինում Պոլսի կաղինը,

Դաշդան օլուր մուհաշըրըն յաս-
տըղը,
Քծր օլասըն շու մէյդանըն դօստ-
լըղը.
Ալդըլար նազլը յարիմ, դուլան
աղլասըն,
Ամա՛ն, ամա՛ն, մայրի՛կ:

Քարից է լինում գաղթականի
բարձը,
Կուրանար այս հրապարակային
համերաշխությունը,
Տարան սիրած յարիս, լսողը թող
լաց լինի,
Ամա՛ն, ամա՛ն, մայրի՛կ:

Երգի խոսքերից պարզ երևում է, որ մեծ տերությունների դիվանագիտական հարաբերությունները (մէյդանըն դօստլըղը— հրապարակային համերաշխությունը) պատերազմի ու զորահավաքի առիթ էին տվել: Իսկ թուրքիայում այդ ժամանակ հատուկ հրահանգ կար՝ բանակում ծառայող քրիստոնյաներին, առանց որևէ զանցանքի, իրենց զորախմբերից հեռացնել և ընդհանուրի աչքից հեռու, ծածուկ վայրերում զնդակահարել կամ բանտերում, զնդաններում սովա-
մահ անել: Ժողովրդական երգերի մեջ ևս կան դրվագներ՝ բանտարկված հայ անմեղ զինվորի ու նրա ընկերների մասին.

Հա՛նիյա դա բէնիմ դուզ-էքմէին
յէյէնլէք,
էխպապ ծլմէդէն՝ բէն ծլուրիմ
դէյէնլէք...

Ո՞րտեղ են իմ աղ ու հացն ուտող-
ները,
Ընկերս չմեռած՝ ես մեռնեմ-
ասողները...

Իսկ որտե՞ղ են նրա «աղ ու հացի» ընկերները.

Տղլիկ Սարգիս, Թասլակ Միսակ
վուրուվմըշ,
իսկ ինքը՝ բանտում.
Մապուսխանէ ուսդու միզէ դամ-
լըյօր,

Տղլիկ(յան)Սարգիսն ու Թասլակ-
(յան)Միսակն սպանվեցին,

Բանտի տանիքից անձրնն է կո-
թում,

Այնինչ նրա հարազատները՝
Անամ դա բաշ ուսդու նէ աղլըյօր,
Քէչաբա նիշաննըմ՝ կարալար բաղ-
լըյօր:

Մայրս սնարիս լաց է լինում,
հեղճ նշանածս սև է կապու՛մ:

Բանտից ու զնդանից բացի, զորակոչվածին ամեն ընդհանուր մահ էր սպառնում.
Չանակալէ իչինդէ վուրդուլար բէ-
նի,
Շլմէդէն մէզարա կօյդուլար բէնի,
Օ՛ֆ, գէնչլիիմ, հէ՛յ վախ:

Չանակալեում ինձ վիրավորեցին,
Չմեռած ինձ գերեզման դրեցին.
Ա՛վաղ, երիտասարդությանս, ա-
վա՛ղ:

Իսկ ողջ մնացողների աչքերից արցունքն անպակաս է.

Սրա-սրա դաշլար,
Ս.սքա՛ր թալիմէ բաշլար,
Չիֆթէ դէգիրմէն գծնա՛ր
Գյօզիմդէն ական յաշլար:

Շարան-շարան հսկա քարեր,
Ասքյարը վարժանքն սկսեց,
Ջույգ շրաղաց կպտտեցնեն
Աչքերիցս թափվող արցունքները:

Վիրավոր զինվորը պատմում է իր անմխիթար վիճակի մասին.

Թրէնէ բինդիմ, Թրէն սալլադը,
Ջալըմ դօկտօր գէլդի, յարամը
բաղլադը,
էյի օլմազ, դէյէ, էվէ յօլադը:

Գնացք նստեցի, գնացքն օրորվեց,
Բժիշկը եկավ, վերքս կապեց,

Չի լավանա, ասեց, ինձ տուն
ուղարկեց:

Նա ցավով է վերհիշում իր ջահել կյանքը, անավարտ մնացած ծրագրերը.
 Օդալար յափողողմ բիր ուժդան
 Իշինդէ յաթմաղմ բիր գյուն բիր
 Թվէնքիմ շաղըրդա ասըլը կալդը,
 Զէհիդըմ սանդըղդա բասըլը կալ-
 Ղւնմա՛, բյուլբյուլ, ղոնմա՛ մի-
 Շու գէնչիկդա նէլէ՛ր գէլդի
 Բաշըմա:

Մայրից ծայր շինեցի սենյակներ,
 Մեջը շքեցի մի օր, մի գիշեր,
 Հրացանս վրանում կախ ընկած
 մնաց,
 Օժիտս սնդուկի մեջ գարսած
 մնաց,
 Մի՛ թառի, սոխա՛կ մի՛ թառի գե-
 րեղմանաքարիս,
 Զահել կյանքիս ինչե՛ր եկան իմ
 գլխին:

Իր երիտասարդությունը կորցրած մերձիմահ գինվորը. կորցրել է նաև
 ապրիլու հույսը.

Անկարադան յէդիմ թագա մէյ-
 վայը,
 Քէհուգա գէշդիմ յալան դու նյայը,
 Անամա դէյին՝ դամդա յաթմա-
 սըն,
 Օղլուն գէլիր դէյի յօլա բաթմա-
 սըն,
 Զուխա շալվարնա ուշխուր դախ-
 մասըն,
 Անամա դէյին՝ անամ աղլասըն,
 Անամգան բաշխա յալան աղլար:

Անկարայում կերա թարմ պտուղը,
 Իզուր անցա այս սուտ աշխարհը,
 Մորս ասացեք՝ տանիքին շքի,
 Տղան կգա ասելով՝ ճամփին
 շնայի,
 Զուխա շալվարին խոնջան լանց-
 կացնի,
 Մորս ասացեք՝ ի՞նքը լաց լինի,
 Իրենից բացի ուրիշը կկեղծի:

Իսկ հայ գինվորի մայրն անիծում է զորահավաքը, որն ավելի նման է կո-
 տորածի, քանի որ գարնան վարդերի ու սոխակների հետ հայ երիտասարդ-
 ները գնացին, բայց՝ ընդմիշտ.

Քժր օլասըն, էնվե՛ր փաշա,
 էրմէնի շըհէլ կալմաղը,
 Գէտտի գյուլ, գէտտի բյուլբյուլ,
 նէ՛ր գէյէլիմ,
 Իստէրսէն՝ աղլա, իստէրսէն՝ գյուլ,
 նէ՛ր գէյէլիմ:

Կուրանաս դու, էնվե՛ր փաշա,
 Հայ երիտասարդ էլ չմնաց,
 Անցավ վարդը, անցավ սոխակը,
 ի՞նչ ասեմ,
 Կուզես՝ լաց, կուզես՝ խնդա, ի՞նչ
 ասեմ:

Ժողովրդի ատելությունը վեր է ածվել նաև ծաղր ու ծանակի. սեղմ բառե-
 րով ուրվագծվում է էնվեր փաշայի արտաքինը, որը նաև նրա ներքին բնութա-
 գիրն է.

էնվեր փաշա էշշա՛կ գիրի,
 Բըլըխլարը յուլար գիրի:

էնվեր փաշան էշի նման,
 Իր բեղերը սանձի նման:

Ժողովուրդն անեծքներ է հղել ոչ միայն էնվեր, այլև Քեմալ փաշային.

Աթըմ Բաղլաղըմ գէլիկլի դաշա,
 Քժր օլասըն սէն, էնվե՛ր փաշա,
 Սէն օլմըյասըն, սէն գէթէրէյըսըն,
 Շո՛ւն Քեմալ փաշա.
 էրմէնիլէրի դաղըտըն դաղլարա
 դաշա:

Նժուլդս կապեցի ծակ քարին.
 Կուրանաս դու, էնվե՛ր փաշա,
 Դու չլինեիր, դու սատակեիր,
 Շո՛ւն Քեմալ փաշա.
 Հայերին ցրեցիր լեռ ու անապատ:

Թուրքական բռնակալության կազմակերպած ցեղասպանությունը մի քանի ամսվա ընթացքում ընդգրկեց Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող գրեթե բոլոր հայաբնակ վայրերը: Հայերի բնաջնջումն իրականացվում էր և՛ տեղերում, ե՛թե աքսորավայրերում՝ Միջագետքի անապատներում, հատկապես Խաս էլ Այնում և Դեր Զորում:

Փենջերէդէն դուշ ուշդը,
Յանգը յուրէկ՝ թութուշդը,
Յան՝մա, յուրէկի՛մ, յան՝մա,

Բու ալըլըկ ըիզէ դյուշտի,
Բու մուհաշըլըկ ըիզէ դյուշտի,
Բու դէրդօրըկ ըիզէ դյուշտի:

Լուսամուտից հավք թռավ,
Վառեց սիրտս՝ հուր դարձավ,
Մի՛ վառվի, սի՛րտ իմ, մի՛ վառ-
վի,
Այս բաժանումը մեղ ընկավ,
Այս գաղթականությունը մեղ ըն-
կավ,
Այս դերդորականությունը մեղ
ընկավ:

Ինչպես տեսնում ենք, «Դեր Զոր» աշխարհազորական տեղավայրի հատուկ անունը, պատմական տվյալ շրջանում, բառիմաստի ընդլայնումով դարձել է նաև հասարակ գոյական՝ «դերդորականություն», իբրև տեղահանության ու կոտորածի խորհրդանիշ: Նվ իրար հաջորդող պատկերներն ուլիվանկարվում են հակիրճ տողերով.

Դէր Զօր չԾլըն՝ բու ըիտտի դու-
ման,
Աման՝ըմ, յաման, հալըմըզ յա-
ման:

Մշուշն է պատել Դեր Զոր անա-
պատին,
Ավա՛ղ, ավա՛ղ, մեր վիճակն է
ողբալի:

Ու պատկերվում է ժողովրդի հավաքական կերպարը՝ իր ողբերգական տա-
ռապանքի բոլոր վայրիվերումներով.

Դէր Զօր վարմադան
էրմէնի մուհաշըլը օթուրմըզ
Հօնքուր-հօնքուր աղլըյօր:

Դեր Զոր չհասած
Հայ գաղթականը նստած
Հոնքուր-հոնքուր կուլա:

Հասարակական չարիքին՝ տարագիրների ողբալի վիճակին, կտրուկ հակա-
դրվում է բնության անմեղ գեղեցկությունը.

Սաբախդան չըխդըմ գունէշ փառ-
լըյօր, մա՛յրիկ,
Օթուրմըզ չէթէլէր սիլահ յաղլըյօր,
մա՛յրիկ:

Առավոտյան արթնացա, արևն էր
շողում, մա՛յրիկ,
Նստած չեթենները զենքերն են յու-
ղում, մա՛յրիկ:

Ժողովրդական երգերին հատուկ զուգահեռական պատկերների ու տրամադրու-
թյունների հակադրությամբ ստեղծվել է բնականի ու հասարակականի կտրուկ
հակադրություն՝ առավել ընդգծելով ողբերգության ահագնությունը. մի կողմից
արևն է շողում, մյուս կողմից՝ չեթենների յուղոտած զենքերն են փայլում, մի
կողմից ծիրանիներն են ծաղկում, մյուս կողմից՝ տիֆի համաճարակն է մո-
լեգնում.

Դէր Զօրըն չԾլըն՝ բիր սրա
միշմիշ,
էրմէնի մուհաշըլը տիֆօյա դյուշ-
միշ:

Դեր Զոր անապատում մի շարք
ծիրանի,
Հայ գաղթականությունն ընկել է
տիֆ:

Կամ՝

Ա՛մանըմ, յա՛ման, հալըմըզ յա՛-
ման,
Դէր Զօր չԾընդա կալըղըմ զա-
ման:

Ավա՛զ, ավա՛ղ, ողբալի է մեր
վիճակը,
Դեր Զորի անապատում եղած ժա-
մանակը:

Իսկ փրկութիւնն՝ չկա.

Դէր Զօր չԾընդա յարալը շօկ դըր,
Գէլմէ՛, դօկտօր, գէլմէ՛ շարասը
յօկ դըր:

Դեր Զորի անապատում վիրավոր
շատ կա,
Մի՛ գա, բժիշկ, մի՛ գա, մեկ է՝
հույս չկա:

Բայց ողջ մնացողների վիճակը մեռնողներից ավելի վատթար է.

Բու սյուրգինիկ բիզէ Ծըմդէն
բէթար,
Օ՛յ, անամ, օ՛յ, անամ, հալըմըզ
յաման:

Այս աքսորը մեզ՝ վատթար է մա-
հից,
Վա՛յ, մայրիկ, մեր վիճակն է ող-
բալի:

Ու միմյանց են հաջորդում «Դեր Զոր» կոչվող դժոխքի ահասարսուռ պատկեր-
ները.

Դէր Զօր չԾընդա ուզանմը,
յաթմը,
Քէլէսի յօկ դըր՝ յուզ ունէ բաքա-
յըմ:

Դեր Զորի անապատում փովել,
պառկել է,
Գլուխը չկա, որ երեսը տեսնեմ:

Ու ձգվում է մահվան ճամբարի մարդկային զանգվածի երթը.

Դէր Զօր չԾընդա զօպտը-ղըյա-
մէթ,
Դինը բիր ուղըրնա գիդէն էրմէնի:

Դեր Զորի անապատում աղմուկ-
իրարանցում,
Հանուն հավատքի հայերն են
գնում:

Մի այլ տարբերակում՝

Է՛րմէնի, էրմէ՛նի շաշխըն էր-
մէ՛նի,
Դինը բիր ուղըրնա, Ծլէ՛ն էրմէնի:

Հայե՛ր, հայե՛ր, շվարած հայե՛ր,
Հանուն հավատքի, նահա՛տակ
հայեր:

Եվ «Հանուն հավատքի» նահատակվող հայերի դիակները սփռված են ամե-
նուրեք.

Օ՛յ, անամ, օ՛յ, անամ, հալըմըզ
յաման,
Քէսիլէն քէլլէլէր գէլմէզ հէսաբա:

Ա՛յ, մայրիկ, վա՛յ, մայրիկ, մեր
վիճակն է ողբալի,
Կտրված գլուխներին չկա հաշիվ:

Եվ Դեր Զորի դաշտը դարձել է կենդանի գերեզմանոց.

Դէր Զօրն իշինդէ նա՛նէլէր բի-
թէր,
Գէբէրինըն քոքըսը դյունյայա յէ-
թէր:

Դեր Զորի դաշտում անանուխն է
բուսել,
Դիակների նեխահոտն աշխարհն է
բռնել:

Համատարած մահաբեր այդ աղետի մասին. պաղափար է տալիս հետևյալ պատկերը.

Մէջվասըղ աղաջլար մէջվայա դժնդու,	Անպտուղ ծառերը պտղով ծան- րացան,
Մուհաջըլ գիգէնին լարուը դժն- մէգի:	Գաղթականների կեսը շվերադար- ձան:

Ամուլ ծառերի պտղավորումը հակադրված է բարգավաճող ժողովրդի ամլացման ու բնաջնջման իրողությանը: Իսկ տառապյալ ժողովուրդը մենակ է ու անօգնական.

Օ՛յ, անամ, օ՛յ, անամ, հալըմըղ յաման,	Ա՛յ, մայրիկ, վա՛յ, մայրիկ, վատ է մեր վիճակ,
Ալլահդան բաշխա յօկ դըր դէր- ման:	Աստծուց բացի չունենք մենք դարման:

Մահվան ճամփան տառապանքով անցնող ժողովուրդն իր ցասումն անեծքով է բանաձևել.

Շու սյուրգինլըկ իջագ էդէն Ջէնէթ յուզի գյօրմէսին:	Այս աքսորը հնարողը Դրախտի երես չտեսնի:
---	---

Եւ կամ՝

Շու մուհաջըրլըկ իջագ էդէն Ջէնէնէմ յօլընա դուրբան օլսըն:	Գաղթականություն հնարողը Դժոխքի ճամփին թող զոհվի:
--	---

Ի՞նչ Զորի երգերի մեջ առանձին շարք են կազմում կողոպտված, որդեկորույս մայրերի ու կույս աղջիկների ողբերգական պատկերները.

Նրզը հարց ու պատասխանով է ընթանում.

— Շու դաղըն արդընա մուհաջըր սէսի վար,	— Այս լեռան թիկունքին գաղ- թականի ձայն կա,
Գիդըն, բակըն շանտասընդա ն՞է- սի վար:	Գնացեք, տեսեք պայուսակում ի՞նչ կա:

Պատասխանը լինում է.

— Բիր չիֆթ չօրաբը վար, Բիր թէկ ֆեսը վար:	— Մի դույզ գուլպա նվ մի գլխարկ կա:
---	---------------------------------------

Իսկ մի այլ տարբերակում՝
— Ազըլըկ դուզ իլան
Ազըլըկ դա ծթ:

— Մի քիչ աղ և
Մի քիչ էլ խոտ:

Նրբամնի հարուստ ու շեն օջախների ունեզրկված տանտիկիներն անպատմելի խղճալի վիճակի էին հասել.

Մարախդան չըիդըմ, շանտամա բախդըմ,	Առավոտյան վեր կացա, պայու- սակս նայեցի,
Աղլայա-սըզլայա բօյնըմա դաղ- դըմ,	Լացով-կոծով վղիցս կախեցի,
Մալըմը-մուլքումը դօվլաթա սաթդըմ,	Ունեցվածքս պետությունը թողե- ցի,
Խաշլըղըմ թուքէնդի, էվլադըմ սաթդըմ:	Դրամս սպառվեց, զավակս բաշ- խեցի:

Ապրելու տարրական պայմաններից ղրկված մայրերն իրենց ունեցվածքը կառավարությանն ու զինված ավազակներին թողնելուց հետո, զգալով իրենց մոտալուտ վախճանը, իրենց զավակներին պահ են տվել բարի արաբներին կամ քրդերին, որպեսզի եթե իրենք մեռնեն, գոնե երեխաները ողջ մնան: Իր հուշերում 83-ամյա Գրիգոր Գյուլելյանն անհուն երախտագիտությամբ է հիշում Համամ բաղաքի մոտ Մուհարտի գյուղի արաբ քրիստոնյա բարի պառավին, որն ամեն երեկո իր եփած փլավն ու գոտու մեջ խցկած հացի կտորները պատերի տակ ուժասպառ ընկած հայ որբուկներին գաղտագողի բաժանելով, պաղտնի անհետանում էր մթության մեջ: Նույնանման մի փաստ է հիշատակված նաև հետևյալ երգում, որտեղ որդեկորույս ծնողը շտապում է թարաքի գյուղում՝ ապաստանած իր զավակին գտնել.

Յօլ վեր, հարուր*, յօլ վեր, գէ-
չէիմ չԾլը,
էվլադըմ շըս-շըբլախ արաբըն
քոյլը՝

հարուր, ճամփա՝ տուր, անա-
պատն անցնեմ,
Որդիս մերկ-տկլոր արաբի գյու-
ղումն է:

Պետք է ենթադրել, որ ներքոհիշյալ երգերն-աննկարագրելի իրարանցումի մեջ ծնողներին կորցրած որբ ու անօգնական երեխաներն են հորինել.

Դէր Զօր չԾլընդա ուզանդըմ յագ-
թըմ,
Անամըն, բաբամըն յօլդա բրակ-
դըմ,
Վա՛յ, անամ, վա՛յ, անամ, հալը-
մըղ յաման...

Դեր Զորի անապատում պառկեցի
քնեցի,
Հայրիկիս, մայրիկիս ճամփին
թողեցի,
Վա՛յ, մայրիկ, վա՛յ մայրիկ, մեր
վիճակն է ողբալի...

Նաև՝

Դէր Զօրըն չԾլընդա շաշըրդըմ,
կալդըմ,
Յիթիրդիմ անամը, բաբամը,
Վա՛յ, անամ, վա՛յ, անամ,
հալըմըղ յաման...

Դեր Զորի անապատում շվարեցի,
մնացի,
Մորս ու հորս ես կորցրեցի,
Վա՛յ, մայրիկ, վա՛յ, մայրիկ,
մեր վիճակն է ողբալի...

Կամ՝

Մէփէթ-սէփէթ յոմրրտա,
Անա՛, բէնի ունուտմա,
Ունուտըրսէն՝ ունուտ,
Գյօզինըն յաշը կուլուտմա:

Քթոց-քթոց հավկիթներ,
Մա՛յր, ինձ շմոռանաս երբեք.
Թե մոռանաս՝ կմոռացվեմ,
Աչքիդ արցունքը չըրացնես:

Եվ կամ՝

Յէշիլ դուրբան օլայըմ գէշէն
գյունլէրէ, մա՛յրիկ,
Քըրըլդը դանաւարըմ, կալդըմ
չԾլէրդէ
Անասըզ, բաբասըղ, մա՛յրիկ,
Գյուշտիմ դիար ղուրբէտտէ, մա՛յ-
րիկ,
Յա բէն աղլամայըմ, քիմլէր
աղլասըն, մա՛յրիկ:

Դաւար զոհ դառնամ անցած
օրերին, մա՛յրիկ,
Փշրվեցին թևերս, մնացի անա-
պատում
Առանց մայր, առանց հայր,
մա՛յրիկ,
Ընկա օտար վայրեր, մա՛յրիկ,
Եթե ես լաց չլինեմ, ո՞վ լաց լինի,
մա՛յրիկ:

* Այդ վայրերով հոսող գետ:

Որբի աչքից արցունքն անպակաս է, քանի որ նրա կյանքը մահից էլ վատ է, իսկ որդեկորույս մոր սիրտն անընդհատ մխում է վշտից.

Անա՛, բու ալըլըկ բա՛նա ծլում-
դէն ըէթէր,
Քիմսէլէր յանմասըն, անամ յա-
նար դէրդիմդէն:

Մա՛յր, այս բաժանումն ինձ մա-
հից էլ վատ է,
Ոչ ոք չի վառվի, մայրս կվառվի
իմ դարդից:

Որբը միշտ մենակ է՝ ջերմ խոսքի կարոտ.

Քէսիր դաղլարընա բիր դաշ
օլայըմ,
Գէլէն-գէլէնէ յօլդաշ օլայըմ,
Օ քսյուզ բաշըլարա կարդաշ օլա-
յըմ,
Օթուր կարշըմա հալլէրիմի սծլ-
լէյիմ:

Քեսիր սարերում մի քար լինի,
Եկող-գնացողին ընկեր լինի,
Որբ քույրերին եղբայր լինի,
Նստերի դեմս, վշտից խոսերնք:

Հուշապատումների մեջ բազմաթիվ վկայություններ կան հայ երեխաներին բռնությունների հավատարմության մասին: 77-ամյա Մարիամ Բաղդիշյանն արցունքներով է հիշում, որ գաղթի ճամփաներին ինքը՝ 5—6 տարեկան, մոր կողքին պառկած չի գացել, որ նա արդեն անշնչացած է... Այնուհետև մի արար նրան տարել է իր տունը, որտեղ փոքրիկ աղջնակը չորս տարի ջուր է կրել ջրհորից: Արաբները նրան հավատարմության կանխիկ, բայց մի հայ քահանայի շնորհիվ նա փախել և ապաստանել է հայկական որբանոցում... Ահա թե ինչու, հավատարմության արվելու, թուրքի կին դառնալու, թուրք երեխաներ ծնելու հնարավոր անպատվությունից խուսափելու համար «հայ աղջիկները ձեռք-ձեռքի բռնած Եփրատ(Եփրատ) գետը նետվեցին».

Գիդէ՛ն, գիդէ՛ն էրմէնի դղլար,
Բիր գյուն ծլում բիզէ դուշէր,
Դյուշմանա ավրաղ օլմամայա,
Օլում դահա էլի բիզէ:

Գնացո՛ղ, գնացո՛ղ հայ աղջիկներ,
Մի օր մահը դեմ կգա մեզ,
Թշնամուն կին չդառնալու համար,
Նախընտրենք մահը մեզ համար:

Նրդումի պես է հնչել նրանց վերջին խոսքը.

Թէք դյուշմանա ավրաղ օլմայըմ,
Եփրատըն իշինդէ՛ ծլում բուլա-
յըմ:

Թշնամուն կին չդառնամ,
Եփրատի մեջ գտնեմ մահ:

Մերսիմցի 80-ամյա Սողոմոն Եթենեկյանը պատմում է. «Երեք-չորս հարյուր հոգի գոտիներին հանած, իրար կապած, իրար ետևից յա՛լլա, Եփրատ գետը կենտվեին... ջուրին երթալը չէիր տեսնար... լեշերը դուրս ելած, բերդի պես իրար վրա դիգված էին... շունները կատղած էին մարդու միս ուտելն...»: Պատմական այս իրողությունը ևս գեղարվեստական լեզվով արտահայտված երգի է վերածվել.

Դէր Զօր չծլլէրի դաշը դըր, գէ-
չիլմէդ,
Եփրատ գէտին սուլար աշի դըր.
բիր թաս իշիլմէզ,
էրմէնի քանինան սու դա իշիլմէզ:

Դէր Զորի անապատները քարոտ
են, անցնել չի լինի,
Եփրատ գետի ջուրը դառն է. մի
թաս խմել չի լինի,
Հայերի արյունով ջուրը խմել չի
լինի:

Տարիներ են անցել, բայց Դեր Զորն ու Եփրատը մնացել են որպես տարագրության, ջարդի ու կոտորածի լուռ վկաներ՝ իրենց մեջ անթեղելով մեր անմեղ նահատակների հիշատակը: Դերզորյան շարքի այս երգերին, ինչպես արդեն տեսանք, հատուկ է սեղմ պատկերավորությունը: Յուրաքանչյուր տող ու բառակապակցություն մի ավարտուն պատկեր է, զանգվածային տեսարանի մի

ահասարսուռ համայնապատկեր, իսկ լալահառաչ կրկնակները լրացնում են բանաստեղծական խոսքի հոգեբանական-հուղական կողմը: Դերդորյան երգերի կառարողները, ի տարբերություն գորահավաքի երգաչարի ասացողները, առավելապես կանայք են, որոնցից և գրի ենք առել մեր նյութերը: Արեմտահայաստանի տարրեր գավառներից ու Անատոլիայի խորքերից տարագրված գրեթե բոլոր երգասացներն արցունքով ու հեկեկոցներով են վերհիշում այս երգերը՝ յուրովի վերապրելով իրենց տխուր անցյալը՝ հայ ժողովրդի անցյալը:

Ամփոփելով ասենք, որ օսմանյան թուրքերենով հորինված վերահիշյալ երգերն իրենց ինքնատիպությամբ ու պատմաճանաչողական արժեքով դառնում են Մեծ եղեռնի ողբերգական իրադարձությունները բանաստեղծական, առարկայական լեզվով լուսաբանող վկայություններ, գեղարվեստական, բայց և հավասարի ժողովրդական վավերագրեր:

ОТОБРАЖАЮЩИЕ СОБЫТИЯ ГЕНОЦИДА ТЮРКОЯЗЫЧНЫЕ ПЕСНИ

ВЕРЖИНЕ СВАЗЛЯН

Резюме

В записанных нами воспоминаниях репатриантов, изгнанных из различных западноармянских губерний и глубин Анатолии, встречаются воспроизводящие события геноцида тюркоязычные песни, которые до сих пор почти не записаны.

Наиболее существенным признаком этих песен, создававшихся под непосредственным воздействием исторических событий, является историзм. Эти песни о призывах армян в армию, организованных османским правительством в период первой мировой войны, о выселении, депортации, а также трагедии жестокого истребления армян в пустынях Дер Зора. Выявлены также синхронно варианты и трансформации этих песен, что свидетельствует об их народности.

Хотя песни сочинены на османском тюркоязычии, их фольклорное и текстологическое исследование показывает, что созданы они армянами и являются народными, устными документами, объективно отображающими трагические события в истории армянского народа и имеющими большую историко-познавательную ценность.